ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՎԱՆԱՁՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԳՈՒԳԱՐՔ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գուգարք գյուղի տարածքն իր շրջակայքով բնակեցվել է դեռևս վաղնջական ժամանակներից՝ դեռ 1միլիոն 800 հազար տարի առաջ: Այդ են վկայում գյուղի տարածքի և 8-10 կմ շառավղով շրջակայքի հնագույն բնակատեղիների, գերեզմանատեղերի, բերդերի, եկեղեցիների մնացորդների, խաչքարերի, հայտնաբերված հնագույն կահ- կարասու, զարդարանքի, զենքերի, գործիքների և տարբեր այլ առարկաների նմուշներն ու մնացորդները:

Գյուղի անվան ծագումը.- ամենահին անունը, որ հայտնի է, Եղափն է, որի ծագման վերաբերյալ որևէ գրավոր տեղեկություն հայտնի չէ, բացի մեր նախնիներից սերնդեսերունդ մեզ հասած երկու տարբերակից. մեկը կապվում է գյուղի բնակիչների հիմնական զբաղմունքից՝ անասնապահությունից ստացվող մթերքի՝ յուղի ու մեղրի առատության հետ (մեր նախնիները բազմիցս հիշատակել են, որ մեր գյուղացու ամանները միշտ յուղ ու մեղրով լի են եղել): Գյուղի անվան մյուս տարբերակը կապվում է Եղիա Իշխանի անվան հետ, ում ամառանոցը կամ նստավայրը եղել է գյուղի տարածքում: Տարբեր ժամանակներում գյուղի անունները հնչել են Եղափլի, Եղափլու, Եղուբլի, Եղուբլու, Յաղուբլի, Յաղոիբլու տարբերակներով՝ մինչև 1945թվականի ապրիլի 1-ը, երբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հրամանագրով գյուղն անվանվել է Մեղրուտ: Իսկ 1980-ականների սկզբին, երբ գյուղը դարձավ Գուգարքի տարածաշրջանի 21 գյուղերի շրջկենտրոն, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1993թ. մայիսի 25-ի որոշմամբ վերանվանվեց Գուգարք և մինչև օրս շարունակում է հպարտորեն կրել հնագույն պատմական Գուգարք նահանգի անունը: 1981թ.-ից մինչև 1995թ.Գուգարքը եղել է իր շրջակա 21 գյուղերի շրջկենտրոնը՝ շրջկենտրոնին հատուկ բոլոր ատրիբուտներով՝ Райком, մեծ դպրոց, մեծ տիպային մանկապարտեզ, բազմահարկ շենքեր, ասֆալտապատ փողոցներ, լուսավորություն...

1988թ.-ի Սպիտակի երկրաշարժի հետևանքով Գուգարքը մեծապես տուժել է՝ փլվել են բազմահարկ շենքեր, ունեցել ենք 25 զոհ, մանկապարտեզի մեծ, տիպային 120 տեղանոց շենքը 4-րդ կարգի վթարվել է և հետագայում քանդվել:

Ներկայումս Գուգարքն ունի մոտ 5800 բնակիչ: Բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ: Վանաձորին մոտիկ լինելը (հեռ.՝ 2 կմ) նպաստում է, որ գուգարքցիներից շատերը աշխատանք գտնեն Վանաձորում, ինչպես նաև կարողանան իրենց ստեղծած գյուղատնտեսական բարիքները իրացնել Վանաձորում: Անկեղծ ասած՝ Գուգարքը ավելի շատ քաղաքատիպ ավանի է նման՝ շրջապատված հրաշալի, գեղատեսիլ, անդորրավետ բնությամբ: Գյուղի շրջակա անտառները նպաստում են էկոլոգիապես մաքուր միջավայրին և օդին, ինչպես նաև շրջակա անտառներում առկա հանգստավայրերը գրավիչ են թե տեղաբնակների, թե հյուրերի համար: Գյուղում միշտ կգտնեք էկոլոգիապես մաքուր , արժեքավոր, առողջարար սնունդ՝ թե կաթնամթերք, թե մսամթերք, թե բանջարաբոստանային կուլտուրաներ:

Գյուղից ոչ շատ հեռու հանդամասում կառուցված «ԿԱՊՈՒՅՏՆԵՐ» հանգստավայրը իսկապես տեսարժան է հյուրերի, տուրիստների համար, քանի որ կառուցված է հայկական պատմական և մշակութային կոլորիտով: Գյուղում գործում են խանութներ, Գուգարքը Վանաձորի հետ կապվում է մշտապես գործող հասարակական տրանսպորտով՝ 15-20րոպեն մեկ Գուգարք- Վանաձորի Քիմգործարան թաղամաս և Գուգարք-Վանաձորի Տարոն թաղամաս երթուղիներով:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գուգարք գյուղի տարածքը գտնվում է Բազումի և Հալաբի (Բովաքարի) լեռնաշղթաների միջլեռնային՝ Փամբակի գոգավորությունում, Փամբակ գետի աջ ափին, ծովի մակերևույթից 1320-1350 մ բարձրության վրա: Հարավ-արևմուտքում սահմանակից է Վանաձոր քաղաքին, հյուսիս-արևելքում՝ Քարաբերդ և Փամբակ , արևելքում՝ Լերմոնտովո, հարավ-արևելքում՝ Շահումյան գյուղերի տարածքներին: Տարածքն ընդգրկում է 2686,66 հա տարածություն՝ անտառներով, խոտհարքներով, վարելահողերով, ճանապարհներով, անօգտագործելի տարածքներով հանդերձ՝ հյուսիսից հարավ ձգվելով 4-5, արևելքից արևմուտք՝ 8-10կմ: Գուգարք գյուղի հյուսիսարևմտյան մասով հոսում է Փամբակ գետը, որը սկիզբ է առնում Ջաջուռի լեռնանցքի արևելյան լանջերից՝ մոտ 2000մ բարձրությունից:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Օդի նվազագույն ջերմաստիճանը -8^0 C է, առավելագույն ջերմաստիճանը՝ 30^0 C, տարեկան միջին տեղումների քանակը 437.1 մմ է:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	ԳՈՒԳԱՐՔ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	4
2.2) մայրաքաղաքից (կմ)	122
2.3) մարզկենտրոնից (կմ)	4
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	80
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	55
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1325
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	48.83/ 4883
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Վանաձոր, Փամբակ, Քարաբերդ, Շահումյան, Լերմոնտովո
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	098 510 520
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո, 1

9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	5758
2. Գրանցված ծնունդների քանակը	48
2.Մահացության դեպքերի քանակը	41
3.Ամուսնությունների քանակը	20
4. Ամուսնալուծությունների քանակը	3
5. Տնային տնտեսությունների թիվը	1800
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	162
7. Կենսաթոշակառուների քանակը	751
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	135

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	2
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	195200
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	9

3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1102

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1720,19
2. Բնակավայրերի հողեր (հա)	4883
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	8.00
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	17.61
5. Հատուկ նշանակության	0,65
6. Հատուկ պահպանվող տարածքների	6,20
7. Անտառային	2840,20
8. Ջրային	8,64
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	565
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	498
11. Խոզերի գլուխաքանակը	179
12. Գյուղատնտեսական տեխնիկա	4
12.1 տրակտորներ (քանակը)	4
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1250

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	4
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25.6
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	6
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0

6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	6
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	4
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Բոլոր ներհամայնքային փողոցների ասֆալտապատում, հանդամիջյան ճանապարհների բարեկարգում	աստիճանաբար՝ տարեցտարի 2026-2030
Գյուղի Միջնակարգ դպրոցի քարե շենքի կապիտալ նորոգում	2025-2026թ
Մշակույթի տան կապիտալ նորոգում և կահավորում	Սուբվենցիոն կամ պետական այլ աջակցությամբ 2026-2027
3-րդ կարգի վթարային թիվ 3 բազմաբնակարան շենքի ամրացում	Շենքի ամրացում պետական աջակցությամբ 2026-2027
Կոյուղատար համակարգի սպասարկում	Կոյուղատար համակարգի ընդգրկում ,,Վեոլիա-Ջուր,, ՓԲԸ-ի սպասարկման տարածքում կամ , եթե հնարավոր է, այլ սպասարկող կազմակերպության , 2026-2027
Փողոցային լուսավորության ավելացում	աստիճանաբար՝ 2027-2029